

56. ՔՅՈՌՕՂԼՈՒՆ ՍԼՎԵՆԸ

Քյոռօղլին ըպրելիս ա ինում Պարսկաստանքեն Բելլուջադաղ սարումը։ Քյինամ ա Դաղստան, մին սիրական քթենում, մին տարի քշտին կենում։ Սիրականը վըեր պատճառուր ա տըեռնում, քշտին մին վրնակե սլվեն ա թողում, ասում.—Վըեր տգա ինի, բլանկը կըքցիս, վըեր ախճիգ ինի՝ վիզը։ Ինքյը քյինամ ա ուրանը երգյիրը, կնգանը կոշտը։

Ժամանակ ա անց կենում, էտ սիրըկանքեն անա մին տղա յար ինում, անումը տինում ըն Հասան-բեկ։

Տղան վըեր մըծանում ա, խաղ անըելիս խոխեքյը տրան ասում ըն՝ տու պիճ ըս։ Տղան քյինամ ա մորը կոշտը, հըրցնում, թա ասե տըեանամ իմ հայր հո՞ւ վա։ Մարը թա՝ քու հայր Քյոռօղլին ա։

Տղան հնգբերունցը մինին նհրեռ քյինամ ա, վըեր հորը շոռ կյա քըթենա։ Եռատ տըեղեր անց կընալան ետը պիցրանում ա մին սար, մին հըսարու քշտի ծին կապում, հնգբերեն նհրեռ պրանվում, քոն ինում։ Տու մի ասըել, տա յել Քյոռօղլուն զուրուղատըեղն ա ինում։ Քյոռօղլուն մարթիքյը կյամ ըն տահանց եր կըցնում, թա՝ տուք հինչ իլլըթ-մի՞ լլաթ ըք, վըեր պերալ ըք ծիյանքեն ըստըեղ պեց թողալ, ըրխըյին քունավ հնցալ։ Հասան-բեկը տահանց պենու տըեղ չի տինում։ Խաբարը հըսցնում ըն Քյոռօղլուն։

Քյոռօղլին կյամ ա, ըսկսում ըն ուրուր նհրեռ հեչաթ տալը, վերյը, կոբև ըն փռնում։ Եռատ վըեր ուրուր քաշ-քաշ ըն անում,

Քյոռօղլին տրան վրեր ա քցում։ Վրեր օղում ա, թա ըսպանե, Հասան-բեկը թա՝ կաց, հաչա էրկու հետ էլ կա։

Էրկուինչի գոնումը վրեր ոնրոնր փռնում ըն, Քյոռօղլին էլա յա վրեր քցում։ Հասան-բեկը վրեր ինգյիլիս բռնրգաչ թեքը պիցրանում ա, սլվենը ուրվամ ա։ Քյոռօղլին բռնրգան մանեը կծում ա, ետնան հըրցնում թա՝ հաչա ասրե, տրեսնամ՝ տու հի՞շտրգան ըս եկալ։ Հասան-բեկը թա՝ կորե ըս ընեական, կորե ըրա, հոր ը՞ս հըրցնում։ Քյոռօղլին թա՝ ասրե տրեսնամ, էլա կորե կանենքյ։ Վրեր շատ ըստիրում ա, Հասան-բեկը թա՝ ես Դաղստանան ըմ, տոնա ըմ եկալ շոռ կյամ, հորրս քթենամ։ Քյոռօղլուն ծրեռքը բռնրգան թունանում ա, ղամանն ծրեռքան վրեր ա ինգյում, ետնան պըռոշտի յըն անում, քյինամ տոն։ Քյոռօղլին կնգանն ասում ա, վրեր տղաս ա, եկալ ա ինձ քթաչ։

Հասան-բեկը մնամ ա Քյոռօղլուն քշին։